

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՄԻՋԵԻ ԱՌԵԻՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹԵԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ.

ՌԻՍԿԵՐ/ՀՆԱՐԱԴՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԻԼԵՆ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

mnatsakanyanvilen@gmail.com

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) եւ Թուրքիայի Հանրապետության (ԹՀ) միջեւ վերջին երկու տարիների ընթացքում տեղի են ունենում զգալի տեղաշարժեր. 2021ի վերջում ՀՀի եւ ԹՀի միջեւ յարաբերությունների կարգավորման գործընթացի յատուկ ներկայացուցիչներ նշանակելուց յետոյ տեղի է ունեցել արդէն չորս հանդիպում¹: Բացի դա յատկանշական էր նաեւ 30 տարի փակ մնալուց յետոյ Մարգարայի կամրջով ՀՀից մարդասիրական օգնության տեղափոխումը ԹՀի երկրաշարժից տուժած շրջաններ²: Կարելի է ընդգծել նաեւ, որ ցամաքային սահմանի բացման ուղղութեամբ աշխատանքները չսահմանափակուեցին մարդասիրական օգնության տրամադրմամբ. ըստ պետական եկամուտների կոմիտէ (ՊԵԿ) նախագահ Ռուստամ Բադասեանի՝ այս պահին հայ-թուրքական սահմանի Մարգարայի անցակէտում աշխուժ աշխատանքներ են ընթանում՝ սահմանի հնարատր բացման դէպքում աշխատանքների արդիւնաւէտ կազմակերպման համար³:

Այսպիսով՝ հաշոյ առնելով հայ-թուրքական յարաբերութիւնների զգալի աշխուժացումը եւ դրանց զարգացման հեռանկարը՝ նման հեռանկարի համակողմանի գնահատումը դառնում է ծայրայեղ արդիական: Յիրաւի, առաջացել է նման զարգացման ինչպէս հնարատրութիւնները, այնպէս էլ ռիսկերը պատկերացնելու, արժեւորելու եւ ըստ այդմ ծրագրելու եւ գործելու անհրաժեշտութիւն: Երկրների միջեւ տնտեսական գործակցութիւնն աւելի արդիւնաւէտ է, երբ նրանց տնտեսական զարգացման եւ շուկայի զարգացման մակարդակները նման են:

¹ ՀՀ ԱԳՆ պաշտօնական կայք, «Հայաստանի եւ Թուրքիայի յատուկ ներկայացուցիչների չորրորդ հանդիպումը», URL: https://www.mfa.am/hy/press-releases/2022/07/01/Armenia_Turkey_4th/11527 (մատչում՝ 10.03.2023):

² Ռոբերտ Զարգարեան, «Հայաստանը 100 տոննա մարդասիրական օգնութիւն է ուղարկել Թուրքիա», Ազատութիւն ռատիոկայան, Երեւան, Փետրուար 11, 2023, URL: <https://www.azatutyun.am/a/32266798.html> (մատչում՝ 15.03.2023):

³ «Հայ-թուրքական սահմանի Մարգարայի անցակէտում ակտիւ աշխատանքներ են ընթանում. Բադասեան», Ֆակտոր տեղեկատուական կենտրոն, Երեւան, 20.07.2023, <https://factor.am/669409.html> (մատչում՝ 21.07.2023):

Այս յօդուածում քննարկել ենք ՀՀ եւ ԹՀ տնտեսութիւնների, արտահանման եւ ներածման կառուցուածքները: Առանձին դիտարկման առարկայ են դարձել 2021ի փոխադարձ արտածման եւ ներածման ծաւալները:

Հետազօտութեան մէջ գնահատել ենք ՀՀ տնտեսութեան իրական հատուածի⁴ վրայ բաց սահմանների ազդեցութիւնը եւ առանձնացրել այն ոլորտները, որոնք կը տուժեն սահմանների բացումից՝ օգտագործելով բացայայտուած համեմատական առաւելութիւնների մոդէլը (Revealed comparative advantage, RCA)⁵: Մոդէլը կարող է բացայայտել այն ապրանքների տեսակները, որոնք ՀՀ կարող է արտահանել եւ ընդգծել այդ ապրանքների արտադրութեան մէջ նրա համեմատական առաւելութիւնը: Այնուամենայնիւ, մոդէլի արդիւնքների ճշգրտութեան վրայ կարող են ազդել շրջափակումը եւ ԹՀ համեմատ ՀՀ տնտեսութեան չափը: Բացի այդ, սահմանի բացումը կարող է չազդել ՀՀ տնտեսութեան բոլոր ոլորտների վրայ, յատկապէս այն ոլորտների որտեղ այն չունի համեմատական առաւելութիւն, քանի որ հայկական շուկան համեմատաբար փոքր է⁶:

ՀՀ եւ ԹՀ տնտեսութեան ճիւղերի համեմատական առաւելութիւնը (RCA) հաշուարկելու համար պէտք է օգտագործել հետեւեալ $RCA_i = (X_i - M_i) / (X_i + M_i)$ բանաձեւը⁷:

⁴ Ըստ Կենտրոնական բանկի յատկորոշման՝ տնտեսութեան իրական հատուածը բաղկացած է ձեռնարկութիւններից (ոչ-ֆինանսական կազմակերպութիւններ), տնային տնտեսութիւններից եւ տնային տնտեսութիւններին սպասարկող շահոյթ չհետապնդող կազմակերպութիւններից:

⁵ Համեմատական առաւելութիւնների մոդէլի համաձայն՝ իւրաքանչիւր երկիր պէտք է կենտրոնանայ այն ապրանքների եւ ծառայութիւնների արտադրութեան վրայ, որոնց համար ունի անելի ցածր այլընտրանքային արժէք: Այսինքն, ընտրուած ապրանքի արտադրութեան արժէքը՝ արտայայտուած այն ապրանքով կամ ծառայութեամբ, որի արտադրութիւնից երկիրը ստիպուած է եղել հրաժարուել: Այլ կերպ ասած, երկիրը պէտք է արտադրի ապրանքներ եւ ծառայութիւններ, որոնք կարող է արտադրել միւս ապրանքների ու ծառայութիւնների համեմատ անելի արդիւնաւէտ, եւ այնուհետեւ այդ ապրանքներն ու ծառայութիւնները փոխանակի այլ երկրների հետ այն ապրանքների եւ ծառայութիւնների դիմաց, որոնք այդ երկրները արտադրում են անելի արդիւնաւէտ:

⁶ Եթէ համեմատական առաւելութիւնների մոդէլով հաշուարկման արդիւնքում տուեալ ապրանքային խմբի անելացուած արժէքը հաւասար է մէկի, դա ցոյց է տալիս, որ երկիրը արտադրում է համապատասխան արտադրանքը ներքին սպառման համար եւ արտածում է անելցուկը՝ ընդգծելով դրա արդիւնաւէտութիւնը եւ արտադրութեան համեմատական առաւելութիւնը: Իսկ՝ մոդէլով հաշուարկուած անելացուած արժէքի -1 ցուցանիշը նշանակում է, որ երկիրը չի կարող արտածել արտադրանքը եւ ամբողջութեամբ կամ մասնակիօրէն ապափնում է ներմուծմանը իր պահանջարկը բաւարարելու համար:

⁷ Որտեղ՝ X_i արդիւնաբերութեան իր ճիւղի իւրաքանչիւր ապրանքախմբի արտահանման արժէքն է, M_i ՝ արդիւնաբերութեան իր ճիւղի իւրաքանչիւր ապրանքա-

Այսպիսով՝ այս հետազոտությունը կը ներկայացնի ՀՀի եւ ԹՀի տնտեսությունների, արտաքին տնտեսական յարաբերությունների, եւ վերջինիս վրայ հիմնուած համեմատական առաւելութիւնների վերլուծութիւն, ինչը թոյլ կը տայ գնահատել առկայ վիճակը եւ դիտարկել երկու երկրների տնտեսական յարաբերությունների հեռանկարը:

ՀՀի եւ ԹՀի ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

ՀՀն եւ ԹՀն հարեան երկրներ են, որոնց տնտեսութիւնները թէեւ ունեն զգալի նմանութիւններ, սակայն առանձնանում են նաեւ ակնառու տարբերություններով: Տնտեսութիւնների տարբերությունները կարելի է տեսնել վերջիններիս ՀՆԱի (Համախառն ներքին արդիւնք) կառուցուածքի դիտարկմամբ (գծ. 1), որտեղ երեւում է, որ ՀՀի տնտեսութեան մէջ գիտատնտեսութեան մասնաբաժինը երկու անգամ գերազանցում է համանման ցուցանիշը ԹՀի տնտեսութիւնում, իսկ արդիւնաբերութեան ծաւալը ՀՀում պակաս է արդիւնաբերութեան ծաւալից ԹՀի ՀՆԱում: Այս փաստերը ապացուցում են, որ տնտեսութեան կառուցուածքի տեսանկիւնից՝ ՀՀի տնտեսութիւնը զարգացածութեան մակարդակով զիջում է ԹՀի տնտեսութեանը:

ՀՆԱ ծաւալի առումով ԹՀի տնտեսութիւնը զգալիօրէն գերազանցում է ՀՀի տնտեսութեանը: 2021ին ԹՀի ՀՆԱն կազմել է մօտ 764 մլրդ դոլար, իսկ ՀՀի ՀՆԱն՝ մօտ 13 մլրդ դոլար: ԹՀն եւ ՀՀն Համաշխարհային բանկի (ՀԲ) կողմից դասակարգում են որպէս միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներ⁸: ԹՀն G20ի⁹ անդամ է, առաջատար տնտեսութիւն է Մերձատր Արեւելքի երկրների շարքում եւ ունի այլազանուած տնտեսութիւն՝ զարգացած արդիւնաբերական ուղղութիւններով, ինչպիսիք են հիսուածեղէնը, ինքնաշարժները եւ էլեկտրոնիկան: Միա կողմից, ՀՀի տնտեսութիւնը մեծապէս կախեալ է օգտակար հանածոների արտածումից եւ դրամական փոխանցումներից՝ ունենալով գործընկերների կենտրոնացուած արտածում: Ուսումնասիրելով երկու երկրների տնտեսական աճը (գծ. 2)՝ կարելի է երկու եզրակացութիւն անել.- ա) ԹՀի տնտեսութեան անկումները չեն ուղեկցում


խմբի ներմուծման արժեքը, RCAն՝ արդիւնաբերութեան համապատասխան ճիւղի իրաքանչիւր ապրանքային խմբի համար բացայայտուած համեմատական առաւելութիւնը:

⁸ World Bank Country and Lending Groups, URL. <https://datahelpdesk.worldbank.org/knowledgebase/articles/906519> (մատչում՝ 04.09.2023):

⁹ G20ն կամ Քսանի խումբը 20 տնտեսութիւն (19 ազգային տնտեսություն եւ ԵՄ) ներկայացնող ֆինանսների նախարարների եւ կենտրոնական բանկերի նախագահների միջազգային խորհրդաժողովի ձեւաչափ է: Ընդհանուր առմամբ, G20ն կազմում է համաշխարհային համախառն ներքին արդիւնքի 90%ը, համաշխարհային առևտրի 80%ը և Երկրագնդի բնակչութեան երկու երրորդը:

ՀՀ տնտեսության նմանատիպ անկումներով, հետեաբար՝ երկու երկրների տնտեսությունների միջև փոխկապակցուածութիւնը ցածր է, եւ ք) համաշխարհային ճգնաժամերի ժամանակ, որոնց ժամանակ երկու երկրներն անկում են ապրել, ԹՀ տնտեսութիւնը ՀՀ-ից աւելի քիչ է ընկել, եւ աւելի արագ է վերականգնուել, հետեաբար ԹՀ տնտեսութիւնն աւելի ճկուն է համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետեանքները յաղթահարելու համար:

Գծապատկեր 1.- ՀՀ եւ ԹՀ-ի ՀՆԱն ըստ տնտեսութեան ճիւղերի, տոկոսային բաշխմամբ, ընթացիկ գներով (2018-21)¹⁰¹¹




Թուրքիայի 2013-22ին արտաձման ծաւալով առաջին 20 երկրների մասնաբաժինը (%) (գծ. 3), եւ արտաձման ապրանքային կառուցուածքը (գծ. 4) հաստատում են, որ Թուրքիայի մօտ բացակայում է երկիր կամ ապրանքախումբ, որը ունի գերիշխող դեր արտաձման մէջ: ԹՀ-ն ունի բաւականին այլազանուած արտաձման կառուցուածք, գործընկերների շրջանում կենտրոնացուածութիւն չկայ, իսկ ՀՀ-ի դէպքում հակառակ իրավիճակն է:


¹⁰ Հայաստանի Հանրապետութեան վիճակագրական կոմիտէ (ՀՀՎԿ), URL: <https://armstat.am/am/?nid=160> (մատչում՝ 28.08.2023):

¹¹ Թուրքիայի Հանրապետութեան վիճակագրական ինստիտուտ (ԹՀՎԻ), URL: <https://www.tuik.gov.tr/> (մատչում՝ 28.08.2023):

Գծապատկեր 2.- ՀՆԱի աճը ՀՀում եւ ԹՀում (1991-2022)¹²



Գծապատկեր 3.- Թուրքական արտաձման ծաալով առաջին 20 երկրների մասնաբաժինը (%) (2013-22)¹³




Փոքր տնտեսություն ունեցող երկրների համար, ինչպիսին ՀՀն է, կենսականորեն կարեւոր է ունենալ արտաձման առեւտրային քաղաքականություն: Անհրաժեշտ է նաեւ հասցնել արտաձման ծաալները ՀՆԱի 50 տոկոսի չափին՝ յատուկ ուշադրություն դարձնելով, որ արտաձման ապրանքա-

¹² Համաշխարհային բանկի վիճակագրական բազա, URL՝ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG> (մատչում՝ 04.09.2023):

¹³ ԹՀՎԻ, URL՝ <https://data.tuik.gov.tr/Kategori/GetKategori?p=dis-ticaret-104&dil=2> (մատչում՝ 06.10.2023):

տեսակները մեծապես կազմում են լինեն անելացում արժեքի բարձր մասնաբաժին ունեցող ապրանքներից¹⁴: Այսպիսով, արտաձման եւ ՀՆԱ յարաբերակցության առումով 2021ին երկու երկրներն էլ ունեցել են նույն ցուցանիշը (զձ. 5), սակայն ՀՀի համար՝ որպես փոքր տնտեսությամբ երկրի, 37.9%¹⁵ ցուցանիշը 2022ին, ինչպես նշուեց վերելում, լաւագոյնը չէ: Անհրաժեշտ է նաեւ ընդգծել, որ զգալի տարբերութիւն կայ նաեւ երկու երկրների արտաձման ապրանքատեսակների բնոյթում. ԹՀն պատրաստի արտադրանքի արտաձման մեծ մասնաբաժին ունի, իսկ ՀՀն՝ հումքի:

Գծապատկեր 4.- Թուրքական արտաձումը ըստ ապրանքատեսակների (% , 2013-21)¹⁶




¹⁴ Ա.Ա.Թաաղեան, «Անորոշության շերտերը եւ տնտեսական փոփոխականությունը. Ինչպես կանխատեսել եւ կարգավորել տնտեսական գործընթացները անորոշության պայմաններում», Ֆլինտա հրատ., 2019, էջ 57:

¹⁵ Համաշխարհային բանկի վիճակագրական բազա, URL՝ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG> (մատչում՝ 04.09.2023):

¹⁶ ԹՀՎԻ, URL՝ <https://data.tuik.gov.tr/Kategori/GetKategori?p=dis-ticaret-104&dil=2> (մատչում՝ 06.10.2023):

Գծապատկեր 5.- ՀՀ եւ ԹՀի արտաձման յարաբերակցութիւնը երկու երկրների ՀՆԱին 1990-2022, տոկոսային բաշխմամբ¹⁷



Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ ԹՀի տնտեսութիւնն աւելի մեծ է եւ այլազանուած, մինչդեռ ՀՀի տնտեսութիւնն աւելի շատ կախուած է միջանի հիմնական արդիւնաբերական ուղղութիւններից եւ արտաքին գործօններից, ինչպիսիք են հումքի արտածումը եւ դրամական փոխանցումները:

ՀՀ եւ ԹՀի ԱՌԵԻՏՐԱՇՈՋԱՆԱՌՈՒԹԵԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Նախ արժէ դիտարկել ՀՀի եւ ԹՀի միջեւ տնտեսական փոխգործակցութեան իրաական հիմքերը: 2002ին ԹՀի կողմից Առեւտրի համաշխարհային կազմակերպութեանը (ԱՀԿ) ծանուցումը ՀՀի եւ ԹՀի միջեւ ԱՀԿ համաձայնագրերը չկիրառելու մասին էական խոչընդոտ դարձաւ երկու երկրների միջեւ առեւտրային յարաբերութիւնների զարգացման համար: ԱՀԿ համաձայնագրի 13րդ յօդուածի համաձայն՝ ցանկացած անդամ-պետութիւն սեփական ցանկութեամբ կարող է հրաժարուել իր եւ մէկ այլ անդամ-պետութեան միջեւ ԱՀԿ համաձայնագրերի դրոյթների կիրառումից: ԹՀի ծանուցմանը յաջորդել է ԱՄՆի նմանատիպ յայտարարութիւն, որը յետոս է կոչուել 2005ին: Հարկ է նշել, որ ՀՀի եւ ԹՀի միջեւ ԱՀԿ համաձայնագրերի չկիրառումը չի նշանակում, որ երկու երկրների միջեւ առեւտուրն ամբողջութեամբ արգելուած է: ԱՀԿ համաձայնագրերի չկիրառումը աւելի շուտ նշանակում է, որ երկու երկրների միջեւ առեւտուրի վրայ չեն տարածուելու ԱՀԿ

¹⁷ Համաշխարհային բանկի վիճակագրական բազա, URL՝ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG> (մատչում՝ 04.09.2023):

համաձայնագրերով նախատեսուած պաշտպանութեան գործիքակազմը եւ առաւելութիւնները: ԹՀն ՀՀին նաեւ չի համարում Արտօնութիւնների ընդհանրացուած համակարգի (GSP) շահառու երկիր¹⁸, թէեւ ԹՀի եւ ԵՄի միջեւ մաքսային միութիւն ստեղծելու մասին թիւ 1/95 որոշման համաձայն, 2002ի Յունուարի 1ից ԹՀն պէտք է տրամադրի սակագնային արտօնութիւններ ԵՄ GSPի շահառու երկրներին:

Արժէ նաեւ դիտարկել ԵԱՏՄի եւ ԹՀի փոխգործակցութիւնը: Եւրասիական տնտեսական միութեան մասին 2015ի պայմանագրի համաձայն՝ ԹՀն, 153 պետութիւնների հետ միասին, ներառուել է ԵԱՏՄի սակագնային արտօնութիւնների ցանկում, որը նախատեսում է այդ երկրներից ապրանքների նկատմամբ կիրառել ԵԱՏՄ ներածման մաքսատուրքերի դրոյքաչափերի 75 տոկոսի չափ մաքսատուրքեր¹⁹: Սակայն ԹՀի, ինչպէս նաեւ ցուցակի 75 երկրների համար այս ռեժիմը չեղարկուել է ԵԱՏՄ տնտեսական յանձնաժողովի խորհրդի որոշմամբ 2021ին²⁰: Այսպիսով, կարելի է ասել, որ այն արտօնութիւնների համակարգերը եւ կառուցակարգերը, որոնք մշակուել են երկրների եւ նրան հետ համագործակցող տնտեսական միութիւնների կողմից, չեն գործում փոխադարձ յարաբերութիւններում, ինչը նուազեցնում է տնտեսական յարաբերութիւնների բարելաման հեռանկարները:

Պետութիւնների տնտեսական յարաբերութիւնները ցոյց տուող ամենակենսաւակնառու ցուցանիշներից մէկը արտածում-ներածում յարաբերութիւններն են: Չնայած ՀՀի եւ ԹՀի միջեւ օրէնսդրական կարգաւորման մէջ յայտնաբերուած բացերին, երկու երկրների միջեւ առետրաշրջանառութիւնն աճել է. եթէ 1996ին ՀՀի ընդհանուր ապրանքաշրջանառութեան մէջ ՀՀի եւ ԹՀի միջեւ ապրանքաշրջանառութիւնը կազմում էր 1,1%, ապա 2019ին այն կազմում էր 3,3% (գծ. 6):

Դիտարկուած ժամանակահատուածում այս ցուցանիշի փոփոխութիւնը ցոյց է տալիս, որ ՀՀի արտաքին տնտեսական գործունէութեան մէջ ԹՀի դերը տարիների ընթացքում աճել է: Կարելի է ընդգծել, որ նման աճը արձանագրուել է ոչ թէ ՀՀից դէպի ԹՀ արտածման, այլ հակառակը՝ ԹՀից ՀՀ ներածման հաշուին, ինչի մասին աւելի մանրամասն կը ներկայացուի ստորեւ: Հետաքրքրական է դիտարկել նաեւ ապրանքաշրջանառութեան ծաւալի՝ ՀՆԱին յարաբերակցութիւնը (գծ. 7): Այս յարաբերակցութիւնը ա-


¹⁸ ԱՀԿ, Առետրային քաղաքականութեան վերանայում, Թուրքիա, Քարտուղարութեան զեկոյց, WT/TPR/S/331, 9 Փետրուարի 2016, էջ 36, https://www.wto.org/english/tratop_e/tp_r_e/s331_e.pdf (մատչում՝ 08.09.2023):

¹⁹ Նախկինում այդ արտօնութիւնը կիրառում էր մաքսային միութեան 2009 Նոյեմբերի 27ի N 130 հրամանով:

²⁰ ԵԱՏՄ տնտեսական յանձնաժողովի խորհրդի 2021 Մարտի 5ի N 17 որոշում “Մաքսային միութեան 2009թ. Նոյեմբերի 27ի N 130 հրամանի մէջ փոփոխութիւններ կատարելու մասին”, URL՝ https://docs.eaeunion.org/docs/ru-ru/01428897/err_12042021_17 (մատչում՝ 08.09.2023):

ճել է մինչև 2011ը՝ կազմելով 2%, որից յետոյ այն նուազել է՝ մինչև 2019ը, հասնելով 0,2%-ի:

Գծապատկեր 6.- ՀՀի ընդհանուր ապրանքաշրջանառությունը եւ ԹՀի հետ ապրանքաշրջանառությունը, բացարձակ մեծությամբ եւ տոկոսով (1996-2022)²¹




ԹՀի հետ ապրանքաշրջանառության ՀՆԱին յարաբերակցության անկման փաստը բացատրում է առաջին հերթին թուրքական արտադրության փոխարինիչների ներածման անելացմամբ՝ Չինաստանից եւ Պարսից ծոցի երկրներից, ինչպես նաեւ ՀՀի՝ ԵԱՏՄ անդամակցությամբ, ինչը զգալիորեն անելացրեց Ռուսաստանի մասնաբաժինը: Ինչպես երեւում է գծապատկերից, ՀՀ ՀՆԱում ԹՀի հետ ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը զգալիորեն զիջում է հարեւան երկրների՝ Իրանի եւ Վրաստանի տեսակարար կշիռին²²:

Գծապատկեր 7.- ՀՀի եւ ԹՀի, Իրանի, Ռուսաստանի, Չինաստանի եւ Վրաստանի միջեւ ապրանքաշրջանառության յարաբերակցությունը ՀՀի ՀՆԱին, տոկոսային արտայայտությամբ (1995-2022)²³

²¹ ՀՀՎԿ, URL. <https://armstat.am/am/?nid=160> (մատչում՝ 10.09.2023):

²² Հարկ է նշել, որ Վրաստանի տարածքով միջանկեալ արտաքին առեւտուրը բերում է Վրաստանի համար գերազնահատուած, իսկ ԹՀի համար՝ թերազնահատուած ցուցանիշի:

²³ ՀՀՎԿ, URL. <https://armstat.am/am/?nid=160> (մատչում՝ 10.09.2023):




ՀՀ-ի եւ ԹՀ-ի միջեւ ապրանքաշրջանառութիւնը 2022ին կազմել է 135.180,7 հազար ԱՄՆ դոլար (եթէ հաշուենք ներածումն ըստ առեւտրային երկրների), կամ 324.934,4 հազար ԱՄՆ դոլար (եթէ հաշուենք ներածումն ըստ ծագման երկրների), ինչը կրկին ցոյց է տալիս վերը նշուած միջնորդատրուած առեւտրի ազդեցութիւնը: ԹՀ-ի մասնաբաժինը ՀՀ-ի ներածման մէջ 2019ի դրութեամբ կազմել է 4,8% (զծ. 8), եւ հաշուի առնելով թուրքական ապրանքների արգելքը՝ 2021ին այդ ցուցանիշը նուազել է մինչեւ 1,4%: Այստեղ հարկ է նշել, որ 2022ին հայկական ներածման կտրուկ տարբերութիւնն ըստ ծագման եւ առեւտրային երկրների վկայում է շրջանցիկ ուղիներով թուրքական ապրանքների ներածման առկայութեան մասին եւ, հետեաբար, 2021ին արհեստականօրէն ցածր ցուցանիշի մասին:


Հարկ է նշել նաեւ, որ եթէ 2001ին ԹՀ-ից ներածուող 20 ապրանքների տեսակարար կշիռը կազմում էր 17,2%, ապա 2020ին այդ ցուցանիշը կազմում էր 42,5%: Կարելի է եզրակացնել, որ ապրանքատեսակների նուազումը բերել է ներածման զգալի կենտրոնացման: 2021ի տուեալներով՝ ԹՀ-ից ներածուող ապրանքների 60,5%ը բաժին է ընկնում առաջատար 3 ապրանքների: Ըստ ապրանքախմբերի (զծ. 9) մանածագործական նիւթերը եւ արտադրանքը կազմել են 26,8%, ոչ-թանկարժէք մետաղները եւ դրանցից պատրաստուած արտադրանքները՝ 17,4%, մեքենաները, սարքատրումները եւ մեքենականութիւնները՝ 16,3%:

Գծապատկեր 8.- ՀՀ-ի ներածումը ԹՀ-ից եւ ԹՀ-ի մասնաբաժինը ընդհանուր ներածման մէջ²⁴

²⁴ Հայաստանի Հանրապետութեան Պետական եկամուտների կոմիտէի (ՀՀՊԵԿ) տուեալների շտեմարան, URL՝ <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIIImportStatistics> (մատչում՝ 10.09.2023):



Գծապատկեր 9.- ԹՀից դէպի ՀՀ ներածման կառուցուածքն ըստ երկնիշ ապրանքախմբերի (2021)²⁵



Մանածագործական նիւթերի եւ արտադրանքի տեսակարար կշիռը այս ապրանքախմբի ներածման ընդհանուր ծաւալում ՀՀ-ում կազմել է 6,51%, ոչ-թանկարժէք մետաղներինը եւ դրանցից պատրաստուած արտադրանքներինը՝ 3,24%, իսկ մեքենաներինը, սարքաւորումներինը եւ մեքենականութիւններինը՝ 1,32%, սակայն 2021ի տուեալների հաշուարկով ԹՀից դէպի ՀՀ ներածումը ՀՀի ընդհանուր ներածման մէջ ամենամեծ մասնաբաժինը

²⁵

ՀՀՊԵԿԻ տուեալների շտեմարան,
<https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIIImportStatistics>
 12.09.2023):

URL՝
 (մատչում՝

ունի (44-46) ապրանքային խմբի գծով (փայտանիփե եւ դրանից պատրաստուած իրեր)՝ 11,93 %²⁶:

Արժէ անելի մանրամասն բացայայտել ԹՀից 2021ի ներածման կառուցուածքը: Այսպէս, ներածումը ապրանքախմբերի անուանացանկի քառանիշ ծածկագրերով դիտարկելու դէպքում պարզ է դառնում, որ 23 անուն ապրանքների տեսակարար կշիռը գերազանցում է նոյն ապրանքախմբի ընդհանուր ներածման 50%ը, իսկ 52 անուն ապրանքների դէպքում մասնաբաժինը գերազանցում է այդ ապրանքի ընդհանուր ներածման 20%ը (աղ. 1):

Աղիսակ 1.- ԹՀից ՀՀ ներածման կառուցուածքը երկնիշ անուանացանկի ապրանքախմբերով (2021)²⁷

Անուանում ապրանքախմբի	Ապրանքա խմբի կոդ	ԹՀից ՀՀի ներած. ընդհ. ծաւալու մ %ը	ԹՀից ներած. (հազար ԱՄՆ դոլար)	Ընդհ. ներած. (հազար ԱՄՆ դոլար)	Ապրանք ախմբի ընդհ. ներած. մէջ ԹՀի մասնաբ.
Կենդանի կենդանիներ, կենդանական	01-05	0.0%	0	167018	0.00%
Բուսական ծագման	06-14	1.6%	1173.2	290342	0.40%
Կենդանական/բուսական ծագման ճարպեր եւ իւղեր	15	0.0%	0	72432.8	0.00%
Պատրաստի սննդալիւծ ապրանքներ	16-24	0.2%	139.9	434180	0.03%
Հանքային ապրանքներ	25-27	0.8%	588 թ	935739	0.06%
Քիմիական եւ դրա հետ փոխկապակցուած արդիւնաբերութեան արտադրանք	28-38	7.1%	5190.4	456005	1.14%
Պլաստմասսա եւ դրանցից պատրաստուած արտադրանք	39-40	9.0%	6553,5	234881	2.79%
Չմշակուած կաշի, դաբա- ղած կաշի, բնական մորթի եւ դրանցից պատրաս- տուած արտադրանք	41-43	1.8%	1290.9	24225.7	5.33%
Փայտ եւ փայտանիփեր	44-46	11.8%	8625.4	72314.7	11.93%
Փայտից կամ այլ մանրաթե- լային փայտային բջջանիւթից ապրանքներ	47-49	1.6%	1190.6	89709.8	1.33%

²⁶ ՀՀՊԵԿի տուեալների շտեմարան, URL՝
<https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCllImportStatistics>
 12.09.2023): (մատչում՝

²⁷ ՀՀՊԵԿի տուեալների շտեմարան, URL՝
<https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCllImportStatistics>
 13.09.2023): (մատչում՝


Կտորագործության նիւթեր եւ կտորագործության արտադրանք	50-63	26.8%	19613.3	301414	6.51%
Կօշկեղէն, գլխարկներ, հովանոցներ, արեւապաշտպան հովանոցներ, ծեռնափայտեր եւ դրանց մասերը, վերամշակուած փետուրներ եւ դրանցից պատրաստուած արտադրանք	64-67	1.7%	1236.8	59921.3	2.06%
Քարից, գիպսից, ցեմենտից, աքբեստից կամ համանման նիւթերից պատրաստուած իրեր, խեցեղէն արտադրանք: ապակի եւ ապակեայ արտադրանք	68-70	1.4%	1036,5	109399	0,95%
Բնական կամ մշակուած մարգարիտներ, թանկարժէք/կիսաթանկարժէք քարեր, թանկարժէք մետաղներ, թանկարժէք մետաղներով պատուած մետաղներ եւ դրանցից պատրաստուած իրեր	71	0.4%	289.8	247643	0.12%
Ոչ-թանկարժէք մետաղներ եւ դրանցից պատրաստուած արտադրանք	72-83	17.4%	12684.3	391383	3.24%
Մեքենաներ, սարքաւորումներ եւ մեխանիզմներ	84-85	16.3%	11896.3	902291	1.32%
Յամաքային տրանսպորտային միջոցներ, օդանաւեր, նաւեր եւ տրանսպորտին առնչուող սարքեր եւ սարքաւորումներ	86-89	1.4%	1048.4	288325	0.36%
Օպտիկական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, չափիչ, հսկիչ, բժշկական կամ վիրաբուժական գործիքներ եւ ապարատներ. բոլոր տեսակի ժամացոյցներ, երաժշտական գործիքներ	90-92	0.0%	11.1	129385	0.01%
Զէնք եւ զինամթերք	93	0.0%	0	3383.6	0.0%
Տարբեր արդիւնաբերական ապրանք	94-96	0.7%	492.2	142809	0.34%
Արուեստի գործեր, հաւաքածուներ, հնաոճ իրեր	97	0.0%	0	307.8	0.00%

Ինչպէս կարելի է տեսնել, հիմնական կենտրոնացումները դրսեւորուած է ոչ թէ պատրաստի արտադրանքի, այլ հումքերի մէջ, ինչը նշանակում

է, որ ՀՀն հումքային ապրանքների ներածմամբ նպատակ ունի յետագայ վերամշամամբ ստանալ անվաճուած արժեքի անելի բարձր մասնաբաժին ունեցող ապրանքներ, սակայն հաշուի առնելով փակ սահմանի հանգամանքն ու ԵԱՏՄ միասնական մաքսային սակագների համակարգը, նման ներածման բարձր արժեքը յետագայում նուազեցնում է հայկական պատրաստի արտադրանքի մրցունակութիւնը միջազգային շուկայում:

ՀՀից ԹՀ արտածման տեսակարար կշիռը ՀՀ ամբողջ արտածման մէջ չնչին է եւ 1996ից իվեր ցոյց է տուել բացասական թափ՝ 2021ին կազմելով հայկական ամբողջ արտածման 0,01%ը (զծ. 10):

Գծապատկեր 10.- ՀՀի արտածումը ԹՀ եւ ԹՀի մասնաբաժինը ընդհանուր արտածման մէջ²⁸




2021ի արտածման ապրանքային կառուցուածքում քառանիշ ծածկագրով 5 ապրանքին բաժին է ընկնում դէպի ԹՀ հայկական արտածման ամբողջ ծաւալի 99,7%ը: Այս ցանկը ներառում է թանկարժեք մետաղներից պատրաստուած զարդեր եւ դրանց մասեր, խոշոր եղջերատուր անասունների մորթուց մշակուած կաշի, խոշոր եղջերատուր անասունների հում կաշի, գրպանի եւ ձեռքի ժամացոյցներ եւ ժամացոյցների ժապաւէններ եւ մասեր: Այսպիսով, արտածման փոքր ծաւալներից բացի, կայ ապրանքների ուժեղ կենտրոնացում (զծ. 11):

Գծապատկեր 11.- ՀՀից դէպի ԹՀ արտածման կառուցուածքը՝ ըստ երկնիշ անուանացանկի ապրանքախմբերի (2021)²⁹

²⁸ ՀՀՎԿ, URL. <https://armstat.am/am/?nid=160> (մատչում՝ 12.09.2023):

²⁹ ՀՀՊԵԿԻ տուեալների շտեմարան, URL՝ <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIIImportStatistics> (մատչում՝ 12.09.2023):




Թանկարժեք մետաղներից պատրաստուած ոսկերչական իրերի եւ դրանց մասերի մասով (7713) կայ 588% աճ. 2022ին ԹՀին բաժին է ընկել ՀՀից ոսկու արտածման 14%ը՝ հաշուի առնելով այն փաստը, որ 2021ին նմանատիպ մատակարարումներ չեն եղել³⁰: Կարելի է ընդգծել 2021ի ներածման եւ արտածման տուեալներում արձանագրուած հետեւեալ փոխկապակցուածութիւնը. ՀՀից ԹՀ ընդհանուր արտածման մէջ խոշոր եղջերատու անասունների չմշակուած մորթու արտածումը ունեցել է 22.2% մասնաբաժին՝ կազմելով 98.3 հազար դոլար: Միեւնոյն ժամանակ ԹՀից ՀՀ մշակուած մորթու ներածումը կազմել է 1050.6 հազար դոլար, իսկ ԹՀն հանդիսացել է միակ երկիրը, որտեղից ՀՀն ներածում է մշակուած մորթի: Այսպիսով՝ կարելի է ամրագրել, որ չմշակուած մորթին արտածում է ՀՀից եւ, անցնելով յաւելեալ արտադրական գործընթացներ, կրկին ներածում ՀՀ: Սա ցոյց է տալիս ՀՀում արդիւնաբերութեան զարգացման խնդիրների առկայութիւնը:

ՀՀ եւ ԹՀի միջեւ առեւտրային յարաբերութիւնների վերլուծութեան խնդիրներից մէկը՝ երկու երկրների պաշտօնական վիճակագրական տուեալների անհամապատասխանութիւնն է: ԹՀն մաքսային յայտարարագրով ՀՀ արտածում չի յայտարարագրում³¹. Եթէ վերցնենք թուրքական պաշտօնական վիճակագրութիւնը, ապա կը ստացուի, որ ՀՀից դէպի ԹՀ ներածումը գերազանցում է արտածմանը (գծ. 12 եւ 13):


³⁰ Ս. Հերզնեան, «Հայաստանից ոսկու արտահանման ծաւալներն աճել են. ուղղութիւններ՝ Հնդկաստան եւ Թուրքիա», URL՝ <https://hetq.am/hy/article/148571> (մատչում՝ 12.09.2023):

³¹ Union of manufacturers and businessmen of Armenia, “Impediments to Direct Trade between Turkey and Armenia”, URL՝ http://umba.am/pics/direct_trade_report.pdf (մատչում՝ 13.09.2023):

Գծապատկեր 12.- ԹՀից ՀՀ արտածումներ (հազ. ԱՄՆ դոլար) ըստ ՀՀ եւ ԹՀ վիճակագրական ծառայութիւնների (2013-21)³²³³



Գծապատկեր 13.- ՀՀից ԹՀ արտածումներ (հազ. ԱՄՆ դոլար) ըստ ՀՀ եւ ԹՀ վիճակագրական կենտրոնների³⁴



³² ՀՀՎԿ, URL. <https://armstat.am/am/?nid=160> (մատչում՝ 13.09.2023):

³³ ԹՀՎԻ, URL. <https://www.tuik.gov.tr/> (մատչում՝ 13.09.2023):


³⁴ ՀՀՎԿ, URL. <https://armstat.am/am/?nid=160> (մատչում՝ 13.09.2023). Նաեւ՝ ԹՀՎԻ, URL. <https://www.tuik.gov.tr/> (մատչում՝ 13.09.2023):

Հարկ է նշել, որ ՀՀ-ից ԹՀ արտածման մի մասը, վերջինիս վիճակագրական ծառայության կողմից ներկայացվում է որպես Վրաստանից արտածում դեպի ԹՀ: Այս հանգամանքը բացատրում է նրանով, որ հայկական ծագման ապրանքները կարող են դժուարությամբ ստեղծել ԹՀ ներածման հարցում: Հնարավոր է աննշան տարբերություն՝ հաշվի առնելով այն, որ մեթոդաբանորեն միմեանց հետ առետուր իրականացնող երկու երկրներում նույն ապրանքների արտածան եւ ներածման ցուցանիշները կարող են տարբերվել ապրանքների փոխադրման ծախսերի պատճառով, որոնք, իրենց հերթին, ներառում են միայն արտածման արժեքի մեջ: Հետեւաբար, հայկական եւ թուրքական աղբյուրների տուեալների միջեւ տարբերությունը դեպի ԹՀ հայկական արտածման գծի վերաբերեալ (թուրքական ներածում ՀՀ-ից) կը լինի FOB արտածման գների եւ CIF ներածման գների տարբերության չափը: Ակնյայտորեն, թուրքական արտածման վերաբերեալ թուրքական տուեալների առումով հակառակ իրավիճակը պետք է լինի: Այս իմաստով, տեղին կը լինի վերլուծել միջազգային կազմակերպությունների տուեալները. ԱՀԿ եւ ՄԱԿի տուեալների շտեմարանները համապատասխանում են իւրաքանչիւր երկրի յայտարարած ցուցանիշերին. Միջազգային առետրի կենտրոնի եւ ՀԲի տուեալները համադրելի են ՀՀ վիճակագրական ցուցանիշերին՝ չնչին շեղումներով: Վիճակագրական տուեալների տարբերությունը վկայում է միջնորդաւորած առետրի առկայութեն:

Ներածման հաշուարկները կատարում են երկու սկզբունքով՝ ըստ ծագման, եւ՝ առետրային երկրների: ՀՀ վիճակագրական ծառայությունը ներածման տուեալներն ըստ ծագման երկրների տրամադրում է 2003ից: Եթէ ՀՀ եւ ԹՀ միջեւ առետրային յարաբերությունները դիտարկենք վերը նշուած պրիսմակով (գծ. 14), ապա ակնյայտ կը դառնայ, որ ԹՀ-ից ըստ ծագման երկրի եւ ըստ առետրային երկրի ներածման տուեալների միջեւ խզումը սկսում է 2008ից:

Գծապատկեր 14.- ՀՀ արտածումը ԹՀ, ՀՀ ներածումը ԹՀ-ից՝ ըստ առետրային երկրի եւ ծագման երկրի եւ դրանց տարբերությունը, (2003-22), հազար ԱՄՆ դոլարով³⁵

³⁵ ՀՀՎԿ, URL. <https://armstat.am/am/?nid=160> (մատչում՝ 13.09.2023):



Միջնորդաւորուած առեւտրի արժէքը որոշելու համար օգտագործում ենք սոյն առեւտրի ներածման գործակիցը: Այս գործակիցը հաւասար է առեւտրային երկրով եւ ծագման երկրով հաշուարուած ներածման տարբերութեան եւ ծագման երկրով հաշուարկած ներածման յարաբերակցութեանը՝ արտայայտուած տոկոսով: Այսպիսով, եթէ ծագման երկրով հաշուարկուած ներածման ցուցանիշը աւելի մեծ է, քան առեւտրային երկրով հաշուարկուածը, ապա երկու երկրների միջեւ առկայ է փոխադարձ առեւտրի չիրացուած ներուժ: Հակառակ իրավիճակը վկայում է այն մասին, որ արտածող երկիրն օգտագործում է իր բարենպաստ պայմանները ոչ միայն սեփական, այլեւ երրորդ երկրներից նմանատիպ ապրանքներ արտածելու համար:

Միջնորդաւորուած ներածման գործակիցը կարող է -100ից մինչեւ + անսահմանութիւն: Արժէ այս հատուածը բաժանել երկու մասի՝ -100ից մինչեւ 0 եւ 0ից մինչեւ + անսահմանութիւն: Առաջին միջակայքը ցոյց է տալիս, որ երկու երկրների միջեւ առեւտրային յարաբերութիւնները թոյլ են զարգացած, եւ ապրանքները ներածուծ են երրորդ երկրի միջոցով, այսինքն կայ միջնորդաւորուած առեւտուր: Այս ցուցանիշը ՀՀի համար 2022ին ԹՀի հետ -72% է, Հնդկաստանինը՝ -69%, Չինաստանինը՝ -50%, Ֆրանսայինը՝ -21%: Երկրորդ դէպքում, երբ գործակիցը մեծ է 0ից, միջնորդաւորուած ներածման գործակիցը ցոյց կը տայ, թէ որքանով է երկիրը զգալի միջնորդ նման առեւտրում. 2022ի համար Վրաստանի ցուցանիշը 399% է (աղ. 2 եւ 3):

Աղիւսակ 2.- Միջնորդաւորուած ներածման գործակից			
Երկիր	Գործակից	Երկիր	Գործակից
ԹՀ	-72%	Ֆիլիպիններ	-94%
Հնդկաստան	-69%	Ռումինիա	-45%
Չինաստան	-50%	Սինգապուր	-48%
Ֆրանսա	-21%	Շուեդիա	-59%

³⁶ ՀՀՎԿ, URL. <https://armstat.am/am/?nid=160> (մատչում՝ 15.09.2023):

Սառուբեան	-41%	Միացեալ Թագ.	-52%
Վիետնամ	-52%	Պերու	-87%
Օման	-41%	Մալայզիա	-75%
Պորտուգալիա	-34%		

Աղիւսակ 3.- Ներածման միջանկեալ գործակից (դրական ցուցանիշ, 2022)³⁷			
Երկիր	Գործակից	Երկիր	Գործակից
Աֆղանստան	506%	Լատվիա	407%
Պահրէյն	206%	Լիտվա	316%
Վիրջինեան կղզիներ	9086%	Մոնակո	282%
Կիպրոս	3421%	Նամիբիա	509%
Չեխիա	212%	Նորուեգիա	230%
Էստոնիա	351%	Պանամա	647%
Վրաստան	399%	ԱՄԷ	698%
Հոնկոնգ	6347%		

Այն դէպքը, երբ այս գործակիցը գրոյական է, կարելի է ասել, որ երկիրն արտածել է միայն տեղական արտադրութեան ապրանքներ: ՀՀի համար 2022ի այս ցուցանիշը Իրանի համար գրեթէ հաասար է գրոյի (0,29%)³⁸: Այսինքն, Իրան արտածուել են միայն Հայաստանում արտադրուած ապրանքներ, այլ երկրների ապրանքը ՀՀն միջնորդուած կերպով Իրան չի արտածել:

2003ից իվեր ԹՀի հետ միջնորդաւորուած ներածման գործակցի փոփոխութիւնների ժամանակագրութիւնը (աղ. 4) ցոյց է տալիս, որ միջնորդաւորուած առեւտրի աճ է նկատուում 2012ից, երբ ցուցանիշը 2011ին 14,7%ից իջել է մինչեւ -35,9% 2012ին:

Աղիւսակ 4.- ԹՀի հետ միջնորդաւորուած ներածման գործակիցը (2003-22)³⁹							
2022	-71,9%	2017	-30,3%	2012	-35,9%	2007	-4,0%
2021	-54,9%	2016	-30,2%	2011	-14,7%	2006	-7,3%
2020	-57,2%	2015	-33,5%	2010	-10,8%	2005	-8,5%
2019	-44,1%	2014	-45,4%	2009	-10,9%	2004	-11,2%
2018	-35,9%	2013	-63,4%	2008	-17,4%	2003	-10,2%

ԹՀի համար այս ցուցանիշը կարելի է բացատրել նրանով, որ նոյնիսկ փակ սահմանի դէպքում թուրքական ապրանքների ներածումը տնտեսապէս շահաւետ է եւ մրցունակ հայկական շուկայում: Առեւտրային յարաբերութիւնների փոփոխութիւնը (աղ. 5) ցոյց է տալիս, որ բացարձակ ծաւալով

³⁷ ՀՀՎԿ, URL. <https://armstat.am/am/?nid=160> (մատչում՝ 15.09.2023):

³⁸ Այս գործակիցը միջնորդաւորուած առեւտրի բացարձակ ցուցանիշ չէ, այլ կրում է յարաբերական բնոյթ:

³⁹ ՀՀՎԿ, URL. <https://armstat.am/am/?nid=160> (մատչում՝ 15.09.2023):

ներածման տարբերությունն ըստ առևտրային երկրի եւ ըստ ծագման երկրի ԹՀից հասել է գագաթնակետին 2020ին եւ կտրուկ նուազել 2021ին:

Աղյուսակ 5.- ԹՀից ՀՀ ներածման (ըստ առևտրային երկրի) եւ ներածման (ըստ ծագման երկրի) տարբերությունը (2003-22)⁴⁰			
Տարի	Ներածում (ըստ առևտրային երկրի) - Ներածում (ըստ ծագման երկրի) (հազար ԱՄՆ դոլար)	Տարի	Ներածում (ըստ առևտրային երկրի) - Ներածում (ըստ ծագման երկրի) (հազար ԱՄՆ դոլար)
2022	-189312.7	2012	-76577.3
2021	-40118.9	2011	-35275.8
2020	-132375.6	2010	-22751.4
2019	-118165.4	2009	-19408.1
2018	-90600.3	2008	-46596.8
2017	-67653.2	2007	-5248.3
2016	-49452.5	2006	-6919.9
2015	-45833.9	2005	-5710.4
2014	-105456.2	2004	-4997.5
2013	-133562.8	2003	-4150.4

Այս հանգամանքը բացատրում է նրանով, որ 2021ի Յունուարից արգելք է դրուել թուրքական ապրանքների ներածման վրայ ՀՀ, ուստի մինչեւ օրէնքի ուժի մէջ մտնելը մինչեւ 2020ի վերջ թուրքական ապրանքները ներածուել են նաեւ որպէս յետագայ ժամանակաշրջանի համար պահուստ:

Վրաստանը յատուկ դեր է խաղում թուրքական ապրանքների միջնորդաւորում ներածման գործում, քանի որ ունի ընդհանուր սահման ե՛ւ ՀՀի, ե՛ւ ԹՀի հետ եւ ունի փոխադրութեան ենթակառուցումներ: Այսպիսով, Վրաստանի հետ ներածման ժամանակագրութիւնը (աղ. 6) ցոյց է տալիս, որ միջնորդի դերը սկսում է աճել 2007ից՝ հասնելով գագաթնակետին 2013ին (+599%), երբ առևտրային երկրով հաշուարկուած ներածումը 7 անգամ գերազանցել է ծագման երկրով հաշուարկուած ներածմանը:

Աղյուսակ 6.- Վրաստանի հետ միջնորդաւորում ներածման գործակիցը, (2003-22)⁴¹					
Տարի	Գործակից	Տարի	Գործակից	Տարի	Գործակից
2022	399%	2015	233%	2008	267%
2021	190%	2014	483%	2007	188%
2020	342%	2013	599%	2006	113%
2019	509%	2012	565%	2005	164%
2018	427%	2011	310%	2004	270%

⁴⁰ ՀՀՎԿ, URL. <https://armstat.am/am/?nid=160> (մատչում՝ 15.09.2023):


⁴¹ ՀՀՎԿ, URL. <https://armstat.am/am/?nid=160> (մատչում՝ 15.09.2023):

2017	304%	2010	317%	2003	212%
2016	140%	2009	269%		

Հարկ է նշել նաեւ, որ հենց 2013ին Վրաստանի հետ միջնորդաւորուած առեւտրի գործակցի աճն ուղեկցուեց ԹՀի հետ միջնորդաւորուած առեւտրի գործակցի համանման անկմամբ, ինչը արձանագրուել է նաեւ ԹՀից ներածման բացարձակ ցուցանիշի զգալի աճով (աղ. 5): Հարկ է նաեւ նշել, որ 2021ին Վրաստանի այս գործակցի կտրուկ անկումը 2020ի համեմատ եւս մէկ անգամ հաստատում է, որ Վրաստանը միջնորդի դեր է խաղում ՀՀի համար հիմնականում հենց ԹՀի հետ առեւտրի առումով:

Արժէ նաեւ դիտարկել ԹՀ եւ ԵԱՏՄ յարաբերութիւնները եւ ՀՀի դերը՝ որպէս ԹՀի հետ ընդհանուր ցամաքային սահման ունեցող երկրի: 2015ի համեմատ՝ 2021ին ԵԱՏՄ արտաքին ապրանքաշրջանառութեան մէջ ԹՀի հետ ապրանքաշրջանառութեան տեսակարար կշիռը 4,64 տոկոս է՝ 4,55 տոկոսի դիմաց (զծ. 15):

Գծապատկեր 15.- ԵԱՏՄի եւ ԹՀի ապրանքաշրջանառութիւնը (2015-21, միլիոն ԱՄՆ դոլարով եւ %ով)⁴²



Չնայած տոկոսային արտայայտութեամբ աննշան փոփոխութեանը, բացարձակ արտայայտութեամբ, 2021ին շրջանառութիւնն աճել է մինչեւ 39,2 միլիարդ ԱՄՆ դոլար՝ 2015ի 26,3 միլիարդ դոլարի դիմաց: Շրջանառութեան նուազում է նկատուել 2016ին, երբ Ռուսաստանը արգելք դրեց ԹՀից որոշակի ապրանքների ներածման վրայ: Այս գործոնը ցոյց է տալիս, որ Ռուսաստանը գերիշխող դեր է խաղում ԵԱՏՄի եւ ԹՀի յարաբերութիւններում: Այսպէս, 2021ի համար ԹՀից ԵԱՏՄ երկրներ ներածման մասով ՀՀի մասնաբաժինը կազմել է 0,8%, Բելառուսը՝ 8,2%, Ղազախստանը՝ 13%,

⁴² Եւրասիական տնտեսական յանձնաժողովի տուեալների բազա, URL՝ http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/union_stat/Pages/default.aspx (մատչում՝ 16.09.2023):

Ղրղզստանը՝ 3,7%, Ռուսաստանը՝ 74,3%: Այս գործոնը ցույց է տալիս, որ ԹՀ-ից ԵԱՏՄ ներածման առումով ՀՀն զբաղեցնում է վերջին տեղը:

Այսպիսով, ՀՀ-ի դերը ԵԱՏՄ-ԹՀ յարաբերությունների առումով աննշան է, եւ այդ յարաբերությունների հիմնական ուղղությունը Ռուսաստանի եւ ԹՀ-ի տնտեսական յարաբերություններն են: Հաշվի առնելով այս իրողությունները, ինչպէս նաեւ 2022 Փետրուարից սկսած ռուս-ուկրաինական հակամարտութեան սկզբից յետոյ Ռուսաստանի դէմ պատժամիջոցները եւ Ռուսաստան զուգահեռ ներածումների հարցում ԹՀ-ի վրայ ճնշումը, ՀՀն կարող է առանցքային տնտեսական դեր խաղալ Ռուսաստանի եւ ԹՀ-ի միջեւ առեւտրային յարաբերություններում՝ ԹՀ-ից Ռուսաստան զուգահեռ ներածման միջոցով:

Հարկ է նշել, որ որոշակի խնդիր կայ նաեւ Մերձատր Արեւելքի երկրների հետ ՀՀ-ի արտաքին առեւտրային քաղաքականութեան հետ կապում, մինչդեռ ԹՀ-ի համար այս տարածաշրջանը արտաքին առեւտրային քաղաքականութեան մէջ երկրորդ տեղն է զբաղեցնում ԵՄ-ից յետոյ: ՀՀ-ի կողմից դէպի Մ. Արեւելքի երկրներ արտածման զարգացման քաղաքականութեան բացակայութիւնը բացասական ազդեցութիւն է ունենում ԹՀ-ի տարածքով դէպի այդ երկրներ առեւտրափոխադրումների իրականացման համար:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՌԱԽԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Ինչպէս նկարագրուած էր ներածութեան բաժնում, վերլուծութեան այս հատուածը իրականացուել է բացայայտուած համեմատական առաւելութիւնների մոդէլի միջոցով՝ հաշուարկելով համեմատական առաւելութիւնների գործակիցը (RCA): Գործակիցը հաշուարկելու համար վերցուել են երկու երկրների վիճակագրական ծառայութիւններում ներկայացուած 2018-21ի տուեալները: 2021ի տուեալներով ՀՀն համեմատական առաւելութիւն ունի հետեւեալ ոլորտներում.-

- կենդանի կենդանիներ, բացառութեամբ 03 ենթադասի կենդանիների (01-05 անուանացանկի ապրանքախմբեր)
- Խմիչքներ (11 անուանացանկի ապրանքախմբեր)
- Ծխախոտ եւ ծխախոտային արտադրանք (12 անուանացանկի ապրանքախմբեր)
- Հում կաշի եւ մորթի (21 անուանացանկի ապրանքախմբեր)
- Փայտային բջջանիւթ եւ թափօնաթուղթ (25 անուանացանկի ապրանքախմբեր)
- Մետաղական հանքաքարեր եւ մետաղի ջարդօն (28 անուանացանկի ապրանքախմբեր)
- Ոսկի՝ ոչ-դրամային տարբերակով (բացի ոսկու հանքաքարերից եւ խտանիւթերից) (97 անուանացանկի ապրանքախմբեր):

Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ երբ սահմանը բացուի, այդ ապրանքների ենթադասերը կարող են արտածուել ԹՀ: Բայց հարկ է նշել,

որ 7 ապրանքներից միայն 2ն են վերջնական սպառման ապրանքներ (11 եւ 12 ենթադասեր), մնացածը ենթադասեր են, որոնք կարող են վերամշակուել եւ ետ ներածուել ՀՀի կողմից՝ ԹՀից ներածման տեսքով, ինչի արդիւնքում աւելացում արժէքը կը ձեւատրուի ԹՀում:

Հայկական արտածման ներութը դէպի ԹՀ դեռեա զուտ տեսական է, քանի որ դրա իրացման ուղղութեամբ գործնական քայլեր չեն ձեռնարկուել: Եթէ նոյնիսկ լինեն մրցունակ եւ արտածուող ապրանքներ, ապա միայն սահմանի բացումը բաարար չէ, եթէ ԹՀն հրաժարուի ՀՀի նկատմամբ կիրառել ԱՀԿ կանոններն ու սկզբունքները: Սա ներառում է «առաւել բարենպաստ պայմանների սկզբունքը», որը չի կարող կիրառուել ՀՀի նկատմամբ, որը թոյլ է տալիս ԹՀին կամայական մաքսատուութքեր կիրառել ՀՀից ապրանքների ներածման համար: Ուստի կարելի է յստակեցնել ԹՀի մաքսային եւ սակագնային քաղաքականութիւնը հայկական ապրանքների նկատմամբ, որից մեծապէս կախում կը լինի ՀՀից ԹՀ արտածման իրագործելիութիւնը:

ԹՀն համեմատական առաւելութիւն ունի հետեւեալ գծերով.

- Միս եւ մսամթերք (1 անուանացանկի ապրանքախմբեր)
- Կաթնամթերք եւ թոչնի ձու (2 անուանացանկի ապրանքախմբեր)
- Բանջարեղէն եւ մրգեր (5 անուանացանկի ապրանքախմբեր)
- Շաքարներ, քաղցրացուցիչներ, մեղր (6 անուանացանկի ապրանքախմբեր)
- Պլաստիկ (58 անուանացանկի ապրանքախմբեր)
- Կաուչուկի արտադրութիւն՝ այլ տեղ չդասակարգուած (62 անուանացանկի ապրանքախմբեր)
- Խցանափայտից եւ փայտից արտադրանք (բացի կահոյքից) (63 անուանացանկի ապրանքախմբեր)
- Հիւսուածեղէն մանուածք, գործուածքներ, պատրաստի արտադրանք եւ յարակից ապրանքներ (65 անուանացանկի ապրանքախմբեր)
- Ոչ-մետաղական օգտակար հանածոների արտադրութիւն, որոնք այլ տեղ դասակարգուած չեն (66 անուանացանկի ապրանքախմբեր)
- Ալյուր չդասակարգուած մետաղների արտադրութիւն (69 անուանացանկի ապրանքախմբեր)
- Ճանապարհային փոխադրական միջոցներ (78 անուանացանկի ապրանքախմբեր)
- Հաաքովի շէնքեր, սանտեխնիկա, ջեռուցման եւ ոչ-շարժական լուսատրման սարքեր (81 անուանացանկի ապրանքախմբեր)
- Հագուստի իրեր եւ հագուստի պարագաներ (84 անուանացանկի ապրանքախմբեր)
- Կօշիկ (85 անուանացանկի ապրանքախմբեր):

Բաց սահմանի դեպքում ԹՀՆ, ամենայն հաանականությամբ, կ'արտածի այդ ապրանքները ՀՀ, ինչը կարող է անբարենպաստ միջավայր ստեղծել տեղական արտադրողների համար:

Հարեան երկրի հետ տնտեսական կապեր հաստատելիս ՀՀի պարենային անվտանգության վրայ հնարատր ազդեցությունը մեծ մտահոգություն է, յատկապես՝ հաշուի առնելով մատչելի եւ բարձրորակ գիտատնտեսական եւ արդիւնաբերական ապրանքներ արտադրելու ԹՀի կարողությունը: Այս փաստը եւս մէկ անգամ ընդգծում է նման տնտեսական գործակցության հնարատր ազդեցությունը ՀՀ պարենային անվտանգության ունակությունը վրայ լիարժէքօրէն գնահատելու անհրաժեշտությունը:

Այս առումով, արժէ դիտարկել նաեւ ՄԱԿի Առեւտրի եւ զարգացման համաժողովի կողմից հաշուարկուած համանման ցուցանիշը: Այն հաշուարկ-


ում է հետեւեալ բանաձեւով.
$$RCA_{Ai} = \frac{\frac{X_{Ai}}{\sum_{j \in P} X_{Aj}}}{\frac{X_{Wi}}{\sum_{j \in P} X_{Wj}}} \geq 1^{43},$$

Այս ցուցանիշն ունի աննշան շեղումներ երկու երկրների ազգային վիճակագրական ծառայությունների համանման ցուցանիշի հաշուարկից: Այսպիսով, ՀՀի համար 2021ի տուեալներով այս ցուցանիշը բացի վերը նշուած ապրանքախմբերից բացայայտում է առաւելություններ (ըստ ապրանքների եռանիշ դասակարգման) նաեւ պանրի եւ կաթնաշոռի, շոկոլադի, կակաոյով պատրաստի սննդամթերքի, ալկոհոլային խմիչքների, արդիւնաբերական ադամանդների, էլեկտրոմի, ապակեայ իրերի, չուգունի եւ շաիգլայզէի, սպունգանման երկաթի, հիւսուածեղէնի գործուածքներից պատրաստուած տղամարդկանց եւ կանանց հագուստի ոլորտներում: ԹՀի համար կարեւորում են հետեւեալ ուղղությունները.- ցորենի ալիւր, քար, աազ եւ մանրախիճ, չցնդող բուսական ճարպեր եւ իւղեր, պլաստիկ մոնոթելեր, հիւսուածեղէնի մանուածք, տրիկոտաժէ գործուածքներ:

Գծապատկեր 16.- ՀՀից ԹՀ արտաձման ներուժի քարտէզ⁴⁴


⁴³ Որտեղ Pն բոլոր ապրանքների բազմությունն է (i∈P), X_{Ai}ն՝ i արտադրանքի արտաձումը A երկրից, X_{Wi}ն՝ i արտադրանքի համաշխարհային արտաձումը, $\sum_{j \in P} X_{Aj}$ ն՝ A երկրի ընդհանուր արտաձումը, $\sum_{j \in P} X_{Wj}$ ն՝ ընդհանուր համաշխարհային արտաձումը:

⁴⁴ Export Potential Map SPOT EXPORT OPPORTUNITIES FOR TRADE DEVELOPMENT, URL: <https://exportpotential.intracen.org/en/products/gap-chart?toMarker=j&market=792&fromMarker=i&exporter=51&whatMarker=k> (մատչում՝ 16.09.2023):



Արտածման ներուժի քարտեզները եւս հաստատում են վերոնկարագրեալ առաւելութիւնները թէ՛ ՀՀ-ի եւ թէ՛ ԹՀ-ի համար (գծ. 16, 17):

Գծապատկեր 17.- ԹՀ-ից ՀՀ արտածման ներուժի քարտեզ⁴⁵



ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ամփոփելով, կարելի է արձանագրել, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ն եւ ԹՀ-ն գտնւում են նոյն տարածաշրջանում եւ հարեան են, երկու երկրների տնտեսութիւնների աճն ու անկումը փոխկապակցուած չեն, ինչը

⁴⁵ Export Potential Map SPOT EXPORT OPPORTUNITIES FOR TRADE DEVELOPMENT, URL: <https://exportpotential.intracen.org/en/products/gap-chart?toMarker=j&market=51&fromMarker=i&exporter=792&whatMarker=k> (մատչում՝ 16.09.2023):

ցոյց է տալիս թոյլ տնտեսական փոխազդեցութիւնը: Չնայած այս հանգամանքին, ԹՀ-ն 30 տարուայ ընթացքում դարձել է ներածման գծով ՀՀ-ի ազդեցիկ գործընկերը: Դէպի ԹՀ հայկական արտածման տեսակարար կշիռը չնչին է, եւ արտածումն ինքնին հիմնականում հումքային է: Մինչդեռ ԹՀ-ից ներածումը հիմնականում ներկայացուած է հենց աւելացուած արժէքի բարձր մասնաբաժին ունեցող ապրանքներով. որոշ դէպքերում արձանագրուած է նաեւ ՀՀ-ից հումքի արտածում եւ յետոյ պատրաստի ապրանքի ներածում ԹՀ-ից:

Յարաբերութիւնների զարգացման յաւելեալ խոչընդոտ են նաեւ իրաւական դաշտի բացերը եւ վիճակագրական տուեալների հաւաքման եւ հաշուառման անհամապատասխանութիւնները, որոնք հիմք են տալիս ենթադրելու, թէ առկայ է երրորդ երկրների միջոցով իրականացուող միջնորդատրուած առեւտուր: Ներածման վերլուծութիւնը՝ ըստ ծագման եւ առեւտրային երկրների, ցոյց է տուել, որ 2022ի համար այս ցուցանիշը ԹՀ-ի համար կազմում է -72%, իսկ Վրաստանի համար՝ 399%: Դիւանագիտական յարաբերութիւնների բացակայութիւնը բարդացնում է իրական առեւտրաշրջանառութեան հաշուառումը եւ դրա ամբողջական վերլուծութիւնը:

ԵԱՏՄ եւ ԹՀ փոխգործակցութեան ոլորտում ՀՀ-ի դերը չնչին է՝ չնայած ընդհանուր սահմանի առկայութեանը: ԵԱՏՄ-ԹՀ առեւտրային յարաբերութիւնների հիմքը Ռուսաստան-ԹՀ առեւտրային յարաբերութիւններն են: Ռուսաստանի նկատմամբ 2022ի պատժամիջոցների նոր իրողութիւնները կարող են դրական դեր խաղալ ԹՀ-ՀՀ-Ռուսաստան առեւտրային շղթայի յարաբերութիւններում՝ ԵԱՏՄ-ԹՀ յարաբերութիւնների առումով:

Համեմատական առաւելութեան առումով ԹՀ-ն, ի տարբերութիւն ՀՀ-ի, առաւելութիւններ ունի աւելացուած արժէքով արտադրանքի առումով, մինչդեռ ՀՀ-ն ունի առաւելութիւններ մեծմասամբ հումքային արտածման գծով (բացառութեամբ ծխախոտի եւ խմիչքների): Այս հանգամանքը վկայում է հայկական արդիւնաբերութեան թերզարգացածութեան եւ ՀՀ-ի հումքի արտածման հիմքով հոլանդական հիւանդութեան⁴⁶ առաջացման դիսկերի մասին:

Վերոգրեալից ելնելով՝ անհրաժեշտ է ընդգծել, որ հայ-թուրքական սահմանը բացելիս ՀՀ-ն պէտք է յստակ արտաքին տնտեսական քաղաքականութիւն մշակի ԹՀ-ի նկատմամբ: Առաջնային է ՀՀ-ի արտածման այլազանացումը. ՀՀ-ն պէտք է կենտրոնանայ դէպի ԹՀ իր արտածման մէջ բացի

⁴⁶ «Հոլանդական հիւանդութիւնը» (Գրոնինգէնի էֆեկտ) ակնյայտ պատճառահետեւանքային կապն է տնտեսութեան որոշակի հատուածի տնտեսական զարգացման խթանման (օրինակ՝ բնական աղբիւրներ) եւ միա հատուածների (ինչպէս գիւղատնտեսութիւնը կամ թէթեւ արդիւնաբերութիւնը) թուլացման միջեւ: Նման իրավիճակը տնտեսութիւնը կախուածութեան մէջ է դնում այդ մէկ զարգացող ճիւղից, ինչը զգալիօրէն պակասեցնում է տնտեսութեան՝ հնարատու ցնցումներին դիմակայելու ունակութիւնը:

աանդական գիտատնտեսական եւ հանքարդիւնաբերական արտադրանքներից այլ արտադրատեսակների ընդլայնման գործընթացի վրայ: Սա կարող է ներառել բարձր աւելացում արժէքով ապրանքների արտածում, ինչպիսիք են SS (Տեղեկատուական արհեստագիտամիջոցներ) ծառայութիւնները, ոսկերչական իրերը եւ վերամշակուած սննդամթերքը: Դրան զուգահեռ անհրաժեշտ է ապահովել արդար մրցակցութիւն հայկական շուկայում թուրքական ընկերութիւնների եւ տեղական ձեռնարկատէրերի համար՝ թոյլ չտալով թուրքական ընկերութիւններին դեմպինգային⁴⁷ գործընթացներով գրաւելու տեղական շուկան:

Դէպի արտածում ուղղուած քաղաքականութեան մշակման եւ ներքին շուկայում արդար խաղի կանոնների սահմանման պայմաններում ՀՀ-ն կարող է զարգացման յաւելեալ միջոցներ ստանալ հայ-թուրքական սահմանի բացման եւ տնտեսական յարաբերութիւնների վերականգնման դէպքում՝ բաարար լծակներ ունենալով նուազագոյնի իջեցնելու հնարաւոր ռիսկերը:

⁴⁷ Դեմպինգը գնագցման գործընթաց է, երբ ընկերութիւնը սահմանում է ինքնարժէքից ցածր գներ, որպէսզի դուրս մղի շուկայում գործող այլ ընկերութիւններին:

**ANALYZING TRADE RELATIONS BETWEEN ARMENIA AND TURKEY:
POTENTIAL RISKS AND OPPORTUNITIES
(SUMMARY)**

VILEN MNATSAKANYAN
mnatsakanyanvilen@gmail.com

Armenian-Turkish relations have recently entered a new round of development. However, it is important to emphasize that any process in the new geopolitical realities is full of not only new opportunities but also risks. In this article, the author assesses the current state of foreign trade relations between Armenia and Turkey, as well as the economies and export structures of the two countries. Accordingly, the paper affirms that, compared with the Armenian economy, the Turkish economy is significantly more diversified and more flexible in the context of external economic shocks. A similar picture can be seen in foreign economic relations: Armenia's exports (both commodity groups and major partners) are significantly more concentrated, which creates additional risks in facing future external economic shocks.

The study concludes that Armenia does not have mediation potential in the context of Turkey-EEU relations, because the main partners on this platform are Turkey and Russia. At the same time, the absence of a foreign economic policy developed by Armenia towards the Middle East makes it almost impossible to use Turkey as a mediator in these relations. The author's analysis of comparative advantages leads to the conclusion that Turkey has an advantage in bilateral relations in terms of product groups that are industrial products, while Armenia's advantages are mainly related to raw materials. In such a situation, the risks of external economic dependence on Turkey increase significantly.

The paper concludes that in opening the borders between Armenia and Turkey, Armenia has to cultivate a strategic economic policy with Turkey to avoid dumpings and the loss of its tiny and weak local industries.